



Մամլո հաղորդագրություն

2011 թվականը՝ կառավարման ճգնաժամի տարի

Բողոքի ցույցերը, որոնցով նշանավորվեց 2011 թ., ցույց տվեցին զանգվածների գայրույթը քաղաքականության և հանրային ոլորտում առկա կոռուպցիայի նկատմամբ

Երևան, 1 դեկտեմբերի, 2011 թ. Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) 2011 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվ (ԿԸՀ) այսօր հրապարակված տվյալների համաձայն՝ կոռուպցիան շարունակում է մոլեգնել աշխարհի չափազանց մեծ թվով երկրներում: Մա ցույց է տալիս, որ այդ երկրների իշխանություններն անկարող են պաշտպանել իրենց քաղաքացիներին կոռուպցիայից՝ լինի դա հանրային միջոցների յուրացումը, կաշառակերությունը թե որոշումների կայացումը գաղտնիության շղարշով պատելու գործելակերպը:

ԹԻ-ն ահազանգում է, որ ողջ աշխարհով մեկ տեղի ունեցող բողոքի ցույցերը, որոնց դրդապատճառները հաճախ կոռուպցիան և տնտեսական անկայունությունն են, հստակորեն ցույց են տալիս, որ քաղաքացիները գտնում են, որ իրենց քաղաքական առաջնորդները և պետական հաստատությունները բավարար չափով թափանցիկ չեն և ոչ էլ հաշվետու իրենց:

«Այս տարի մենք տեսանք «կոռուպցիա» բառը բողոքողների ցուցապաստառների վրա՝ անկախ նրանից, թե այդ բողոքողները հարուստ էին, թե աղքատ: Լինի դա պարտքի ճգնաժամում հայտնված Եվրոպան, թե քաղաքական նոր դարաշրջան սկսած արաբական աշխարհը, քաղաքական առաջնորդները պետք է ականջալուր լինեն ավելի լավ կառավարում ունենալու պահանջներին», - նշում է ԹԻ նախագահ տիկին Հյուգետ Լաբելը:

Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2011 թ. Արդյունքներ

Համաթիվի դասակարգման այս տարվա աղյուսակում ընդգրկված է 183 պետություն և տարածք, որոնց համաթիվերը գնահատված են 0-ից (բացարձակապես կոռումպացված) 10 (բացարձակապես չկոռումպացված) սանդղակով: Օգտագործված են 17 ուսումնասիրություններից ստացված տվյալները, որոնք վերաբերում են այնպիսի գործոնների, ինչպիսիք են հակակոռուպցիոն բնույթի օրենքների կիրարկումը, տեղեկատվության մատչելիությունը և շահերի բախումը:

Դասակարգման աղյուսակում ընդգրկված երկրների ավելի քան երկու երրորդի ԿԸՀ արժեքը 5-ից պակաս է: ԿԸՀ ամենաբարձր արժեք ունեցող երկիրը Նոր Զելանդիան է (9.5), որին հետևում են Ֆինլանդիան և Դանիան (երկուսն էլ՝ 9.4): Աղյուսակը ԿԸՀ 1.0 արժեքով եզրափակում են Սոմալին և Հյուսիսային Կորեան (Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը). վերջինս առաջին անգամ է ընդգրկվում ԿԸՀ աղյուսակում:

«2011 թ. մենք ականատեսը եղանք ավելի մեծ թափանցիկության անդիմադրելի ձգտմանը, երբ ողջ աշխարհում քաղաքացիներն իրենց իշխանություններից պահանջում են լինել հաշվետու: ԿԸՀ բարձր արժեքներ ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ թափանցիկության ընդլայնմանն ուղղված ջանքերը, եթե դրանք կրում են հետևողական բնույթ, կարող են ժամանակի ընթացքում բերել մեծ հաջողությունների, որից կշահեն նաև իրենց քաղաքացիները», - նշում է ԹԻ գործադիր տնօրեն պարոն Կոբուս դե Սվարդտը:

Արաբական գարնան երկրների մեծ մասը գտնվում է ԿԸՀ դասակարգման աղյուսակի ներքին հորիզոնականներում, և նրանց ԿԸՀ արժեքները 4-ից ցածր է: Դեռ մինչև արաբական գարնան սկիզբը տարածաշրջանի վերաբերյալ իր զեկույցում (տես http://www.transparency.org/news_room/in_focus/2010/nis_report_regional_me) ԹԻ-ն նախագուշացնում էր, որ խնամիականությունը, կաշառակերությունը և հովանավորչությունն այնքան խորն են ներթափանցել այդ երկրների առօրյա կյանքում, որ գործող հակակոռուպցիոն օրենքներն այլևս որևէ ազդեցություն չեն գործում:

Արժե նաև նշել, որ եվրոյի գոտու այն երկրները, որոնք առավել խիստ են տուժել պարտքային ճգնաժամերից, գտնվում են Եվրամիության առավել ցածր ԿԸՀ արժեքներ ունեցող երկրների շարքում: Դա մասամբ հետևանք է այն բանի, որ պարտքային ճգնաժամի առանցքային խթանիչների շարքում է նաև պետական պաշտոնյաների անկարողությունը՝ սանձահարելու կաշառակերությունը և հարկերից խուսափումը:

Խորհրդային Միության փլուզումից 20 տարի անց, ելնելով նրա 15 նախկին հանրապետությունների ԿԸՀ ներկա արժեքներից, կարելի է արձանագրել, որ բացի մերձբալթյան հանրապետություններից (ընդ որում, այստեղ առանձնանում է Էստոնիան, որի համաթիվը (6.4) ամենաբարձրն է ոչ միայն նախկին ԽՍՀՄ, այլ նաև Եվրոպայի նախկին կոմունիստական երկրների մեջ) և վերջին տարիներին նաև Վրաստանից, մնացած բոլոր երկրներում, ներառյալ Հայաստանում, կոռուպցիան ունի համակարգային բնույթ:¹ Սա վկայում է, որ անցյալ դարի 90-ականների մասշտաբային համակարգային տնտեսական և քաղաքական փոփոխությունները, դժբախտաբար, չգուգակցվեցին համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումներով:

Հայաստանի ԿԸՀ արժեքը մնացել է անփոփոխ, և ինչպես նախորդ, այնպես էլ այս տարի, հավասար է 2.6-ի, և այդ ցուցանիշով նա այս տարվա 183 երկրների ԿԸՀ դասակարգման աղյուսակում կիսում է 129-րդից 133-րդ տեղերը (անցյալ տարի Հայաստանը 178 երկրների շարքում կիսում էր 123-րդից 126-րդ տեղերը) Դոմինիկյան Հանրապետության, Հոնդուրասի, Ֆիլիպինների և Սիրիայի հետ: Համաձայն 2011 թ. ԿԸՀ տվյալների՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից 2010 թ. համեմատ առաջընթաց գրանցել է միայն Վրաստանը²: ԽՍՀՄ մնացած նախկին հանրապետություններն, ինչպես նաև Թուրքիան և Իրանը նախորդ տարվա համեմատ առաջընթաց չեն գրանցել:

¹ Էմպիրիկ հետազոտությունները ցույց են տալիս, որ այն երկրներում, որոնց ԿԸՀ արժեքները 3-ից ցածր են, կոռուպցիան ունի համակարգային բնույթ: Այն հանդիսանում է լուրջ հիմնախնդիր այն երկրների համար (որոնց թվում են նաև Լիտվան, Լատվիան և Վրաստանը՝ ԿԸՀ համապատասխանաբար 4.8, 4.2 և 4.1 արժեքներով), որոնց ԿԸՀ արժեքները գտնվում են 3-5 տիրույթում:

² Համաձայն ԹԻ-ի կողմից ԿԸՀ հաշվարկման մեթոդաբանության՝ տվյալ երկրի դեպքում տարեկան կտրվածքով ԿԸՀ արժեքի փոփոխություն կարելի է գրանցել միայն այն դեպքում եթե. ա/ ԿԸՀ արժեքը մեկ տարվա ընթացքում նվազել կամ աճել է առնվազն 0.3-ով, և բ/ այդ նվազումը կամ աճը գրանցվել է բոլոր այն աղբյուրների առնվազն կեսի կողմից, որոնք օգտագործվել են ն' 2010թ., և' 2011թ. ԿԸՀ հաշվարկներում: